Հավելված N 1
ՀՀ կառավարության 2013 թվականի
հունվարի 24-ի N 55 - Ն որոշման

2013 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ

«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՆ»

ԳԼՈՒԽ 1. ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետությունում կայուն տնտեսական աճի ապահովման քաղաքականության համատեքստում փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) զարգացումն է կոչված ապահովելու երկրի տնտեսական աճի կայունությունը՝ տնտեսությանը հաղորդելով նորարարական ուղղվածություն և ճկունություն:

ՓՄՁ-ի սուբյեկտներին ուղղված աջակցության ծրագրերը հիմնված են Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած տնտեսական քաղաքականության հիմնարար սկզբունքների վրա և նպաստում են երկրի, հատկապես նրա հեռավոր և սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացմանը և անհամամասնությունների հաղթահարմանը, ինչը ներկայումս Հայաստանի Հանրապետության կառավարության տնտեսական քաղաքականության ռազմավարական և գերակա ուղղություններից մեկն է: Այս առումով ՓՄՁ-ն իր առանձնահատկություններով և զարգացմամբ ընձեռած հնարավորություններով այն անկյունաքարն է, որը նշանակալի ազդեցություն ունի երկրի տնտեսական զարգացման վրա՝ ապահովելով զգալի սոցիալ-տնտեսական արդյունք և տարածքային համաչափ զարգացում:

Կարևորելով ՓՄՁ-ի դերը երկրի տնտեսության զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման, երկրում սոցիալական և քաղաքական կայունության ապահովման գործում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը շարունակական քայլեր է ձեռնարկում՝ ուղղված ՓՄՁ-ի ոլորտի պետական աջակցության և դրա զարգացման ուղղությամբ համապատասխան ծրագրերի իրականացմանը:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2012 թվականին, հետևողական աշխատանք է իրականացվում Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ-ի զարգացման քաղաքականության ու ռազմավարության, ՓՄՁ-ի ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերի մշակման, ինչպես նաև

ՓՄՁ-ի ոլորտի պետական աջակցությամբ համապատասխան միջոցառումների իրականացման ուղղությամբ:

Իրականացվել է ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության 2012 թվականի ծրագիրը, որով նախատեսված ծրագրային միջոցառումների գերակշիռ մասը (շուրջ 90 տոկոսը) նպատակաուղղվել է Հայաստանի Հանրապետության մարզերում՝ առավելապես սահմանամերձ և հեռավոր բնակավայրերում սկսնակ ու գործող ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ցուցաբերմանը և, ընդհանուր առմամբ, Հայաստանի Հանրապետության մարզերում և տարածաշրջաններում տնտեսական ու գործարար ակտիվության բարձրացմանը:

Ըստ ծրագրի իրականացման արդյունքների՝ 2012 թվականի ընթացքում ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման, ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) արտահանման և շուկաներում առաջմղմանն, սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության ուղղություններով, ինչպես նաև գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական աջակցություն է ցուցաբերվել Երևանում և Հայաստանի Հանրապետության մարզերում 8463 սկսնակ և գործող ՓՄՁ-ի սուբյեկտներին:

Մասնավորապես, ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության 2012 թվականին ծրագրի իրականացման արդյունքում ապահովվել են՝

1) «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի (Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ) կենտրոնական գրասենյակի, մարզային մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կարողությունների զարգացում, այդ թվում՝ սեփական ռեսուրսների ներգրավմամբ.

2) աջակցության ցուցաբերում շուրջ 209 սկսնակ գործարարի՝ ապահովելով շուրջ 80 նոր գրանցված կազմակերպություններ և 129-ը գտնվում են գործարար գաղափարի զարգացման փուլում.

3) ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) արտահանման և շուկաներում առաջմղմանն աջակցության ցուցաբերում՝ շուրջ 97 ՓՄՁ-ի սուբյեկտի.

4) Հայաստանում ձեռնարկությունների եվրոպական ցանցի (ԶԵՑ) հաղորդակցման կենտրոնի գործունեության ապահովման շրջանակներում նորարարական և միջազգայնացման աջակցության ցուցաբերում՝ շուրջ 94 ՓՄՁ-ի սուբյեկտի.

5) գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ցուցաբերում 7398 ՓՄՁ-ի սուբյեկտի.

6) գործարար ուսուցողական աջակցության ցուցաբերում 515 ՓՄՁ-ի սուբյեկտի.

7) ՓՄՁ-ի սուբյեկտների աշխատակիցների հաշվապահական և հարկային ունակությունների զարգացում՝ Հաշվապահական կենտրոնի գործունեության շրջանակներում 250 ՓՄՁ սուբյեկտների և կենտրոնի ԳԾՄ-ների կողմից սպասարկվել է 1022 ՓՄՁ սուբյեկտ.

8) ՓՄՁ-ի սուբյեկտների ֆինանսական և ներդրումային հնարավորությունների ընդլայնում, մասնավորապես, 30 ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվել են վարկային երաշխավորություններ:

Ընդհանուր առմամբ ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության 2012 թվականի ծրագրի շրջանակներում նախատեսված ծրագրային ուղղությունները (ծրագրային միջոցառումները) ուղղված են Հայաստանի Հանրապետության մարզերում նոր ՓՄՁ-ի սուբյեկտների և նոր աշխատատեղերի ստեղծմանը, գործող ՓՄՁ-ի սուբյեկտների մրցունակության բարձրացմանը, ցածր տնտեսական ակտիվությամբ առանձնացող տարածաշրջաններում ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը, երկրի համախառը ներքին արդյունքում, ինչպես նաև այլ մակրոտնտեսական ցուցանիշներում ՓՄՁ-ի սուբյեկտների տեսակարար կշռի հետագա ավելացմանը: Հարկ է նշել, որ արդյունքները գրեթե կրկնակի գերազանցել են ծրագրով նախատեսված արդյունքները:

ԳԼՈՒԽ 2. ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2013 թվականի ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) մշակման և իրականացման հիմքը «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն է:

Ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել նաև՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 18-ի N 730-Ա որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 9-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 1055-Ն որոշումը.

3) Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականության և ռազմավարության հիմնադրույթները (Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի օգոստոսի 3-ի նիստի N 32 արձանագրության 3-րդ կետ).

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1790-Ն որոշմամբ հաստատված Փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին աջակցության 2012 թվականի ծրագրի իրականացման ընթացքի ցուցանիշների ուսումնասիրության և վերլուծության արդյունքները:

ԳԼՈՒԽ 3. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. Ծրագրի նպատակներն են՝

1) պետական ուղղակի աջակցության գործիքների միջոցով խթանել երկրում ՓՄՁ-ի զարգացմանը.

2) ՓՄՁ-ի զարգացման ճանապարհով նպաստել երկրի, հատկապես նրա հեռավոր և սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացմանը և անհամաչափությունների հաղթահարմանը.

3) ՓՄՁ-ի զարգացման միջոցով նպաստել երկրի տնտեսության դիվերսիֆիկացմանը և ապահովել զբաղվածության և ինքնազբաղվածության մակարդակի բարձրացում.

4) ՓՄՁ-ի սուբյեկտների պետական աջակցությանը նպատակաուղղված շրջանակների բազմազանեցումը, ինչպես նաև ՓՄՁ-ի սուբյեկտներին ցուցաբերվելիք պետական աջակցության նպատակայնության ու հասցեականության ապահովումը:

2. Ծրագրի նպատակների ապահովման ուղղությամբ նախատեսվում է՝

1) գործարար միջավայրի բարելավմանը զուգընթաց գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտների ձեռներեցությամբ զբաղվելու, ինչպես նաև նրանց ֆինանսական և ներդրումային հնարավորությունների ընդլայնում՝ նախապատվություն տալով Հայաստանի Հանրապետության մարզերին՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման առանձնահատկությունները.

2) կանանց ձեռներեցությամբ զբաղվելու հնարավորությունների ընդլայնում.

3) ՓՄՁ-ի սուբյեկտներին պետական աջակցության առկա գործիքների (ֆինանսական, խորհրդատվական և այլն) կիրառման շարունակականության և արդիականացման ապահովում.

4) ՓՄՁ-ի սուբյեկտներին պետական աջակցության նոր գործիքների ներդրում, մասնավորապես, տեղական տնտեսական զարգացում և արդյունաբերական համակարգերի ձևավորում.

5) ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեության միջազգայնացում, մասնավորապես, ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության՝ գործող միջազգային կառույցներին և ցանցերին ինտեգրում.

6) ՓՄՁ-ի սուբյեկտների նորարարական նախաձեռնությունների խթանում, մասնավորապես, արտահանմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության արդյունաբերական քաղաքականության ռազմավարության ներքո իրականացվող միջոցառումների շրջանակում նորարարությունների ներդրման նպատակով դրամաշնորհների տրամադրման միջոցով.

7) հեռանկարային և արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ցուցաբերում.

8) գիտատար արտադրության իրականացման հնարավորությունների բացահայտում և այդ ուղղությամբ գործող ՓՄՁ-ի սուբյեկտների կարողությունների առաջնահերթ զարգացում.

9) ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրի իրականացման շրջանակներում ավելի շատ ՓՄՁ-ի սուբյեկտների ներգրավում և նրանց ցուցաբերվող պետական աջակցության շրջանակների ընդլայնում.

10) ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցող ենթակառուցվածքների հզորացմանն ուղղված միջոցառումների իրականացում:

ԳԼՈՒԽ 4. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացման սկզբունքներն են՝

1) ծրագիրն իրականացվում է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի (համաձայնությամբ) և ծրագրով նախատեսված ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցող այլ կառույցների միջոցով.

2) ծրագրի իրականացման շրջանակներում նախապատվությունը տրվում է արտադրության և ծառայությունների ոլորտում գործող, նորարարություններ և ժամանակակից տեխնոլոգիաներ կիրառող, հեռանկարային և արտահանման ներուժ ունեցող գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցությանը.

3) ծրագրի իրականացման նշանակալի մասն ուղղվում է Երևան քաղաքից դուրս՝ Հայաստանի Հանրապետության մարզերում, հատկապես հեռավոր ու սահմանամերձ բնակավայրերում գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ցուցաբերմանը.

4) միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ փոխհամաձայնությունների շրջանակներում ՓՄՁ-ի զարգացման համատեղ ծրագրերը կիրականացվեն համաֆինանսավորման սկզբունքով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 5. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ)

Ծրագրով նախատեսված ծրագրային ուղղություններն (միջոցառումները) են՝

1. ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում, կառավարում և ընդլայնում

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության տարեկան ծրագրերի իրականացման կարևորությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մարզերում (տարածաշրջաններում) դրանց մատչելիության ապահովման անհրա-

ժեշտությունը՝ 2002 թվականին Երևանում հիմնադրվեց Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կենտրոնական գրասենյակը, իսկ 2003-2005 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում ստեղծվեցին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի մասնաճյուղեր (առանձին մարզերում՝ նաև ներկայացուցչություններ)՝ ձևավորելով վերջինիս մարզային մասնաճյուղերի ցանց:

Ներկա փուլում կարևորվում է ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցող ենթակառուցվածքների զարգացման խնդիրները և ծրագրային այս ուղղությունը միտված է նշված ենթակառուցվածք հանդիսացող Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կարողությունների հզորացմանը:

Սույն ծրագրային ուղղության շրջանակներում կիրականացվեն աշխատանքներ ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում, կառավարում և ընդլայնում իրականացնող Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի աշխատակիցների մասնագիտական հմտությունների զարգացման և որակավորման բարձրացման ուղղությամբ, ինչպես նաև աջակցություն կցուցաբերվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կենտրոնական գրասենյակի, մարզային մասնաճյուղերի պահպանմանը, ամրապնդմանը, դրանց գործունեության ընդլայնմանն ու վերջիններիս կարողությունների հզորացմանը:

Հարկ է նշել, որ 2013 թվականին նախատեսվող 2 նոր ծրագրային ուղղությունների ներդրման նպատակով Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կառուցվածքում ստեղծվել են 2 նոր ստորաբաժանում, որոնք պետք է համակարգեն ծրագրային նոր ուղղությունները:

Ծրագրի իրականացման շրջանակներում 2013 թվականին միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների (ծրագրերի) հետ համատեղ պարբերաբար միջոցառումներ կիրականացվեն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կադրերի մասնագիտական ուսուցման և վերապատրաստման ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա ապահովելու ծրագրով նախատեսված մի շարք միջոցառումների իրականացումը՝ սեփական կադրային ռեսուրսներով:

2. Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն

Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության միջոցառման նպատակն է նոր ՓՄՁ-ի սուբյեկտների ստեղծմանը նպաստելը՝ նրանց աջակցություն ցուցաբերելով հիմնադրման և կայացման շրջանում:

Սույն միջոցառման շրջանակներում նախատեսվում է սկսնակ գործարարներին տրամադրել աջակցության հետևյալ բաղադրիչները՝

1) մասնակիցների ուսուցում, վերապատրաստում, մանրակրկիտ ընտրության փուլ անցած գաղափարների կյանքի կոչման նպատակով գործարար ծրագրերի (գործարար նախաձեռնությունների) մշակում.

2) սկսնակների գործարար ծրագրերի (գործարար նախաձեռնությունների) ֆինանսական աջակցության (վարկավորման) ապահովում, ինչպես նաև առանց ուսուցման և վերապատրաստման դասընթացների մասնակցության սկսնակների կողմից ներկայացված գործարար ծրագրերի ֆինանսավորում:

Ֆինանսական աջակցությունը (վարկավորումը) կիրականացվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործընկեր առևտրային բանկերի միջոցով, ընդ որում, վարկային պարտավորությունը 100 տոկոսով կերաշխավորվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից:

2013 թվականի ընթացքում սկսնակ գործարարներին տրամադրվող ֆինանսական աջակցության (վարկավորման) առավելագույն գումարը կկազմի 3,000.0 հազ. դրամ, տարեկան 10-12 տոկոս տոկոսադրույքով, մինչև 3 տարի մարման ժամկետով: Կախված իրականացվող ծրագրերի բնույթից՝ ֆինանսավորումը կիրականացվի փուլային սկզբունքով՝ ապահովելով իրականացվող ծրագրերի շարունակականությունը և վերահսկելիության արդյունավետության բարձրացումը: «Արդյունաբերական համակարգերի կառուցմանն աջակցություն» ծրագրային ուղղության շրջանակներում մշակված գործարար մոդելների իրականացման ժամանակ, եթե իրականացնողն սկսնակ գործարար է, նույնպես կֆինանսավորվի այս գործիքի ներքո: Եթե գործարար մոդելի իրականացման համար անհրաժեշտ լինի ավելի մեծ գումար, քան նախատեսված է գործիքի ընթացակարգով, ապա նման յուրաքանչյուր դեպքի ֆինանսավորումը կհաստատվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի կողմից:

Ծրագրային այս ուղղության իրականացման ժամանակ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը կհամագործակցի ինչպես միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների (ծրագրերի), այնպես էլ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության հետ, մասնավորապես, աջակցության 1-ին բաղադրիչի իրականացման համատեքստում:

2013 թվականին սույն ծրագրային ուղղության շրջանակներում աշխատանքներ կիրականացվեն նաև Հայաստանում բիզնես մենթորների ինստիտուտի ձևավորման նպատակով: Բիզնես մենթորները կարևոր դերակատարում ունեն սկսնակ գործարարների աջակցության գործընթացներում: Մենթորները մասնագետներ են, որոնք կարող են ուղղորդել տնտեսավարող սուբյեկտներին իրենց ամբողջ գործունեության ընթացքում և հատկապես հիմնադրման սկզբնական փուլում: Մենթորները տեղերում սկսնակ գործարարներին աջակցություն են ցուցաբերում գործարար ծրագրերի կազմման, մարքեթինգային հետազոտությունների անցկացման, ֆինանսական ռեսուրսների ներգրավման, իրավական և հարկային խորհրդատվության տրամադրման, պետա-

կան կառույցներում շահերի ներկայացման, գործարար կապերի հաստատման և այլ ուղղություններով:

Մենթորները հանդիսանում են նաև տեղական տնտեսական զարգացման ծրագրերի ակտիվ մասնակիցներ: Տիրապետելով տեղական տնտեսական զարգացան գործիքակազմին՝ նրանք համայնքներին կարող են մատուցել տեղական տնտեսական զարգացան վերաբերյալ ծառայություններ և տրամադրել խորհրդատվություն:

Մենթորների ինստիտուտի կայացման հիմնական առաքելությունը կվերապահվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ին: Վերջինիս կողմից պետք է սահմանվի մենթորների հավաստագրման կարգը, նրանց որակավորման և գործունեության պայմաններն ու ընթացակարգերը, իրականացվեն մենթորների բազմակողմանի և պարբերաբար վերապատրաստման աշխատանքներ՝ նշված ծառայությունները պատշաճ մատուցելու համար:

Ընդհանուր առմամբ, 2013 թվականին Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության ծրագրի շրջանակներում նախատեսվում է ուսուցողական աջակցության ցուցաբերում՝ 200-250 սկսնակ գործարարի, իսկ ֆինանսական աջակցության ցուցանիշներն արտացոլվում են վարկային երաշխավորությունների տրամադրման ցուցանիշների հետ, քանի որ դրանք նույնպես հանդիսանում են վարկային երաշխավորություններ:

3. Տեղական և տարածքային տնտեսական զարգացում

Տեղական և տարածքային տնտեսական զարգացման ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության համայնքների համաչափ զարգացման խնդիրների լուծման նպատակով մասնակցային ախտորոշման, մասնակցային պլանավորման և արդյունքների մասնակցային գնահատման մեթոդների վրա հիմնված տարածաշրջանային և համայնքային տնտեսական զարգացման ծրագրերի իրականացումը:

2013 թվականին նախատեսվում է շարունակել աշխատանքները տեղական տնտեսական զարգացման միջազգային լավագույն փորձի, մասնավորապես, գերմանական «Մրցակցային առավելությունների մասնակցային գնահատում» (PACA) մեթոդի (գործիքի) տեղայնացման ու ներդրման ուղղությամբ: Այն իրենից ենթադրում է համայնքներում ռեսուրսների և մրցակցային առավելությունների գնահատում, որը հնարավորություն է տալիս համայնքի տնտեսության ախտորոշման, ռեսուրսների ու մրցակցային առավելությունների մասնակցային վերլուծության միջոցով ի հայտ բերելու բարձր հավելյալ արժեք ունեցող ապրանքները և կառուցելու դրանց արժեքային շղթաները:

Այս ծրագրային ուղղության նպատակն է տեղական հումքի, աշխատուժի, ավանդույթների և գիտելիքի վրա հիմնված մրցունակ արտադրության խթանումը, տեղական ապրանքանիշերի ձևավորումը և հետագա առաջմղումը՝ նորարարական մոտեցումների կիրառմամբ:

2013 թվականին կիրականացվեն Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական քարտեզագրման աշխատանքների արդյունքների հիման վրա վերլուծված համայնքների տնտեսական ներուժի օգտագործմանն ուղղված աշխատանքներ, և որոշ համայնքներում կներդրվեն տեղական տնտեսական զարգացման գործիքները:

2013 թվականին նշված ծրագրային ուղղության շրջանակներում կկիրառվեն մի շարք տեղական և տարածքային տնտեսական զարգացման գործիքներ՝ գերմանական «Մրցակցային առավելությունների մասնակցային գնահատում» (PACA) մեթոդը և ճապոնական «Մեկ գյուղ, մեկ արտադրանք» (One Village, One Product) հայեցակարգը: Վերջինիս շրջանակներում կշարունակվի 2012 թվականին մեկնարկած Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (ՃՄՀԳ) համատեղ ծրագիրը՝ ուղղված տեղական արտադրանքի խթանմանը և ապրանքանիշերի ձևավորմանը: Սույն ծրագրի շրջանակներում ՃՄՀԳ-ի կողմից Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ին համակողմանի աջակցություն կցուցաբերվի Հայաստանի տարածաշրջաններում ճապոնական հայեցակարգի ներդրման համար: Այդ նպատակով Հայաստան ժամանած փորձագետների կողմից Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ին կփոխանցվի նման ծրագրերի իրականացման ճապոնական հարուստ փորձը, մի շարք տարածաշրջաններում կիրականացվեն տեղական արտադրանքի զարգացման և առաջմղման հնարավորությունների վերաբերյալ բազմակողմանի ուսումնասիրություններ, կմշակվեն համապատասխան փաստաթղթեր, կձևավորվեն կոնկրետ առաջարկություններ և ծրագրերում ներգրավված տեղական ՓՄՁ-ի սուբյեկտներին կցուցաբերվի համապատասխան տեխնիկական և խորհրդատվական աջակցություն:

Ընդհանուր առմամբ, 2013 թվականին կիրականացվի մրցակցային առավելությունների գնահատում 15 համայնքներում, և 3 համայնքներում կձևավորվի տվյալ համայնքի առավել մրցունակ համարվող արտադրատեսակի արտադրության և իրացման արժեշղթան:

4. Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում

1) ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) արտահանման և շուկաներում առաջմղմանն աջակցություն

Շուկայական տնտեսավարման պայմաններում արդյունավետ ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հիմնական գրավականն է թողարկվող արտադրանքը (մատուցվող ծառայությունները) պատշաճ մակարդակով շուկայում ներկայացնելը, սպառման ծավալներն ավելաց-

նելը և, ընդհանուր առմամբ, թողարկվող արտադրանքը (մատուցվող ծառայությունները) շուկաներ, մասնավորապես, արտաքին շուկաներ առաջ մղելը:

Այս համատեքստում Հայաստանում ձեռնարկատիրության զարգացման ներկա փուլում առանձնակի կարևորվում է տեղական ՓՄՁ-ի սուբյեկտների արտահանման ներուժի զարգացումը և արտաքին շուկաներ մուտք գործելու հնարավորությունների ընդլայնումը, ինչը կստեղծի լրացուցիչ հնարավորություններ վերջիններիս համար՝ ապահովելով նշանակալի տնտեսական արդյունք:

2013 թվականին միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների (ծրագրերի) հետ համագործակցության շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից գործընկեր ՓՄՁ-ի սուբյեկտներին կցուցաբերվի աջակցություն արտահանում սկսելու համար անհրաժեշտ կարողությունների ձևավորման, վերջիններիս կողմից իրականացվող արտահանման գործունեության զարգացման և ընդլայնման ուղղությամբ:

Այդ նպատակով արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ-ի սուբյեկտներին կտրամադրվի տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն արտաքին շուկաներ մուտք գործելու համար անհրաժեշտ փորձարկումների անցկացման, թույլտվությունների, սերտիֆիկատների ձեռքբերման և համապատասխան փաստաթղթերի պատրաստման հարցերում, Եվրամիության երկրներ ապրանք արտահանողներին Արտոնությունների ընդհանրացված համակարգի և նրա ընձեռած հնարավորությունների, միջազգային ցուցահանդեսների և տոնավաճառների վերաբերյալ: ՓՄՁ-ի սուբյեկտներին կտրամադրվի նաև տեղեկատվություն ժամանակակից տեխնոլոգիաների վերաբերյալ և կցուցաբերվի աջակցություն դրանց ներդրման ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա ավելի մրցունակ դարձնելու ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքը՝ արտաքին շուկաներ դուրս բերելու համար:

ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) արտահանմանն աջակցության ծրագրի շրջանակներում համալիր աջակցություն կցուցաբերվի առանձին ոլորտներում գործող արտահանման մեծ ներուժ ունեցող առաջատար ընկերություններին՝ նրանց արտադրանքն արտաքին շուկաներում ներկայացնելու և արտահանման ծավալներն ընդլայնելու ուղղությամբ:

2013 թվականին նշված ծրագրի շրջանակներում կշարունակվի և կընդլայնվի համագործակցությունն արտահանումը խթանող տարբեր միջազգային կառույցների (ծրագրերի)՝ Զարգացող երկրներից ներմուծման խթանման կենտրոնի, Միջազգային գործարարության և համագործակցության հոլանդական գործակալության և վերջինիս կողմից իրականացվող «Համագործակցության զարգացում» ծրագրի հետ և այլն՝ դրանցում Հայաստանի ՓՄՁ-ի սուբյեկտներին ներգրավելու նպատակով:

Արտահանող ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցություն ցուցաբերելու նպատակով կօգտագործվեն նաև ձեռնարկությունների եվրոպական ցանցի (ՁԵՑ) ընձեռած լայն հնարավորությունները, մասնավորապես, պոտենցյալ գործընկերների որոնման և համագործակցության հաստատման հարցերում:

Ընդհանուր առմամբ, 2013 թվականին ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) արտահանման և շուկաներում առաջմղմանն աջակցության ուղղություններով նախատեսվում է աջակցության ցուցաբերում շուրջ 100 ՓՄՁ-ի սուբյեկտի:

2) Հայաստանում ձեռնարկությունների եվրոպական ցանցի հաղորդակցման կենտրոնի գործունեության ապահովում

Հայաստանում ձեռնարկատիրության զարգացման կարևոր խնդիրներից է ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեության միջազգայնացումը, որը լրացուցիչ հնարավորություններ կստեղծի տեղական ՓՄՁ-ի սուբյեկտների համար արտաքին շուկաներ մուտք գործելու գործընթացում: Այս համատեքստում կարևորվում է ՁԵՑ-ի գործունեությունը Հայաստանում: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը 2008 թվականից ի վեր, հանդիսանալով որպես ՁԵՑ-ի հյուրընկալող կառույց, ներկայումս գործում է որպես ՁԵՑ-ի հաղորդակցման կենտրոն Հայաստանում:

Հայաստանում ՁԵՑ-ի հաղորդակցման կենտրոնի գործունեությունն ուղղված է հայ գործարարների գործունեության միջազգայնացմանը և եվրոպական շուկա մուտք գործելու հնարավորությունների ընդլայնմանը, նրանց նորարարական կարողությունների զարգացմանը և տեխնոլոգիական կատարելագործմանը:

Հայաստանում ՁԵՑ-ի հաղորդակցման կենտրոնի կողմից 2013 թվականի ընթացքում նախատեսվում է միջոցառումների լայն շրջանակ, որոնք կուղղվեն ՁԵՑ-ի գործունեության լուսաբանմանն ու հնարավոր շահառուների շրջանում տեղեկատվության տարածմանը, եվրոպական շուկաներ մուտք գործելու օրենսդրական ընթացակարգերի պարզաբանմանը, Հայաստանի ՓՄՁ-ի սուբյեկտների համար ՁԵՑ-ի անդամ երկրների շրջանում գործընկերների որոնմանը և գործարար կապերի հաստատմանը, գործարար տեղեկատվության և տեխնոլոգիաների փոխանցմանը, նորարարությունների խթանմանը և այլն:

Բացի դրանից՝ ՓՄՁ-ի սուբյեկտների, ինչպես նաև այլ շահագրգիռ կազմակերպությունների շրջանում ամսական կտրվածքով կտարածվի Հայաստանում ՁԵՑ-ի հաղորդակցման կենտրոնի էլեկտրոնային տեղեկաթերթը, որտեղ գործարարները կարող են գտնել Հայաստանում գործընկերների որոնման առաջարկներ, ինչպես նաև տեղեկատվություն ՁԵՑ-ի անդամ երկրներում կազմակերպվող ցուցահանդեսների և միջոցառումների մասին և այլ գործարար

տեղեկատվություն: Նշված գործարար տեղեկատվությունը հասանելի կլինի նաև Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ինտերնետային էջից:

2013 թվականի ընթացքում ՁԵՑ-ի գործարար համագործակցության հիմնապաշարը կհամալրվի միջազգային համագործակցության ներուժ ունեցող Հայաստանի ՓՄՁ-ի սուբյեկտների գործարար համագործակցության նոր առաջարկներով:

2013 թվականին Հայաստանում ՁԵՑ-ի գործունեության ընդլայնման նպատակով աշխատանքներ կիրականացվեն միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների (ծրագրերի) հետ՝ համագործակցության հաստատման ուղղությամբ:

Ընդհանուր առմամբ 2013 թվականին Հայաստանում ՁԵՑ-ի հաղորդակցման կենտրոնի գործունեության ապահովման շրջանակներում նախատեսվում է ՁԵՑ-ի գործարար համագործակցության հիմնապաշարի (բազայի) համալրում հայ գործարարների կողմից ներկայացվող շուրջ 150 գործարար համագործակցության առաջարկներով:

5. Արդյունաբերական համակարգերի կառուցմանն աջակցություն

«Արդյունաբերական համակարգերի կառուցմանն աջակցություն» ծրագրային ուղղության նպատակն է տեղական հումքի, աշխատուժի, ավանդույթների և գիտելիքի վրա հիմնված մրցունակ ոլորտային ուղղությունների (հատկապես արտահանման ներուժ ունեցող) զարգացումը և տեղական արտադրությունների ձևավորման խթանումը (մասնավորապես ներմուծման փոխարինումը)՝ օրինակելի գործարար մոդելների ներդրման միջոցով:

Սույն ծրագրային ուղղության շրջանակներում կիրականացվեն հետևյալ գործողությունները՝

1) **Գործարար մոդելների ստեղծում**

Գործարար մոդելների ստեղծման նպատակով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության մարզերի տնտեսության զարգացման ներուժ ունեցող ճյուղերի քարտեզագրում և կրկնօրինակման ենթակա առավել մրցունակ ոլորտների ընտրություն, որից հետո յուրաքանչյուր ոլորտի համար կներգրավվեն կարճաժամկետ փորձագետներ, որոնք Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի փորձագետների հետ համատեղ կստեղծեն օրինակելի գործարար մոդել տվյալ ոլորտի համար: Գործարար մոդելների ստեղծման համար, որպես սկզբունք՝ կկիրառվի նաև ժամանակակից ու նորարարական տեխնոլոգիաների ներդրումը.

2) **Գործարար մոդելների իրագործում**

Գործարար մոդելի ներդրման փուլում ենթադրվում է ընտրված ոլորտում գործունեության որոշակի փորձ ունեցող գործարարների բացահայտում և ընտրություն, որոնք կանցնեն որոշակի դասընթացային փուլ՝ բիզնեսի վարման կարողությունների զարգացման և ստեղծված գործա-

բար մոդելի տեխնոլոգիական տարրերի համակցությամբ, ինչպես նաև կստանան խորհրդատվություն և ֆինանսավորում՝ ըստ անհրաժեշտության: Այս փուլի ավարտին արդեն նախատեսվում է ունենալ փաստացի գործող նորաստեղծ բիզնես.

3) **Ուղեկցում և մոնիթորինգ**

Այս փուլում նախատեսվում է ստեղծված բիզնեսների ուղեկցում՝ (խորհրդատվություն, կարճաժամկետ դասընթացներ, տեղեկատվական աջակցություն և այլն) վերջիններիս գործունեության առաջին մեկ տարվա ընթացքում: Ուղեկցման գործընթացին զուգահեռ իրականացվելու է նաև փորձնական ծրագրերի մոնիթորինգ և գնահատում:

Ընդհանուր առմամբ 2013 թվականին կմշակվի 3 օրինակելի գործարար մոդել և դրանց հիման վրա կստեղծվի 30 նոր բիզնես:

6. ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական աջակցություն և հաշվապահական կենտրոնի գործունեության ապահովում

1) **ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական աջակցություն**

Ծրագրի շրջանակներում սկսնակ և գործող ՓՄՁ-ի սուբյեկտներին կցուցաբերվի գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն՝ տնտեսավարող սուբյեկտների (ՓՄՁ-ի սուբյեկտների) պետական գրանցման, ձեռնարկության տնտեսական գործունեության վերլուծության, շուկայական հետազոտությունների իրականացման, կառավարման և շուկայավարման, գործընկերների որոնման ու նրանց հետ գործարար կապերի հաստատման, սարքավորումների և հոսքագծերի ձեռքբերման, նորարարությունների կիրառման և ժամանակակից տեխնոլոգիաների առևտրայնացման, ֆինանսական միջոցների ներգրավման և կառավարման, մտավոր սեփականության պաշտպանության, լիցենզավորման, ստանդարտացման, համապատասխանության հավաստման, գործարար և ներդրումային ծրագրերի մշակման, հաշվապահական հաշվառման, հաշվապահական (ֆինանսական) հաշվետվությունները կազմելու և ներկայացնելու, հարկային ու մաքսային ձևակերպումների, իրավաբանական և այլ կարևոր ուղղություններով՝ ըստ ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից ներկայացված հայտերի:

Դրա հետ մեկտեղ միջոցառումներ կիրականացվեն գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ծրագրերն առավել նպատակային և արդյունավետ դարձնելու ուղղությամբ, հատկապես, Հայաստանի Հանրապետության մարզերում: Այդ նպատակով Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի մարզային մասնաճյուղերի կողմից, հիմնականում Հայաստանի Հանրապետության մարզերի հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում, խմբային հանդիպումներ կկազմակերպվեն գործարար համայնքի ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում գործարարներին կներկայացվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործունեությունը, աջակցության ծրա-

գրերը, դրանցից օգտվելու ընթացակարգերը, կքննարկվեն գործարարներին հետաքրքրող հարցերը և դրանց վերաբերյալ մասնակիցներին կտրամադրվի համապատասխան խորհրդատվություն և տեղեկատվական նյութեր:

Միաժամանակ, գործընկեր միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների (ծրագրերի), ինչպես նաև տեղական գործընկեր մասնագիտացված ընկերությունների հետ համագործակցությամբ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից Հայաստանի Հանրապետության մարզերում կկազմակերպվեն հանդիպումներ այնտեղ գործող ՓՄՁ-ի սուբյեկտների հետ՝ գիտելիքների և փորձի փոխանցման, տեղերում մասնագիտական խորհրդատվության տրամադրման նպատակով:

2013 թվականի ընթացքում կշարունակվեն աշխատանքները նեղ մասնագիտական հմտություններ պահանջող խորհրդատվական աջակցության ծրագրերի իրականացման ուղղությամբ, ինչպես նաև ՓՄՁ-ի սուբյեկտների համար գործարար խորհրդատվական ծառայությունների մատուցման մատչելիության ապահովման ուղղությամբ: Աջակցության հիմնական մասը կուղղվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացվող համալիր աջակցության ծրագրերում ընդգրկված և տարածաշրջաններում հեռանկարային զարգացման ներուժ ունեցող ՓՄՁ-ի սուբյեկտներին:

Նախատեսվում է նաև տեղեկատվական ու վերլուծական նյութերի (մասնագիտական և տեղեկատվական բնույթի գործարար ուղեցույցների, բրոշյուրների, տեղեկագրերի) հրատարակում, որոնք անվճար կտրամադրվեն ՓՄՁ-ի սուբյեկտներին և գործարարությանն աջակցող կազմակերպություններին, ինչպես նաև դրանք կտեղադրվեն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ինտերնետային էջում:

Դրա հետ մեկտեղ զանգվածային լրատվության միջոցների (ԶԼՄ-ներ), (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության մարզերում գործող ԶԼՄ-ների) մասնավորապես, «ՓՄՁ լրատու» հեռուստահաղորդաշարի միջոցով գործարար համայնքին կներկայացվի համապատասխան տեղեկատվություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից տրամադրվող աջակցության ուղղությունների (ծրագրերի) մասին, ինչպես նաև կներկայացվի առանձին ՓՄՁ-ի սուբյեկտների հաջողված փորձը: Բացի դրանից՝ հաղորդման շրջանակներում կստեղծվի թեմատիկ բաժին, որի միջոցով գործարարներին պարբերաբար տեղեկատվություն և պարզաբանումներ կտրամադրվեն ձեռնարկատիրական գործունեությանն առնչվող օրենսդրական դաշտի և դրանում տեղի ունեցող փոփոխությունների վերաբերյալ:

2013 թվականին կշարունակի գործել և կընդլայնվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ինտերնետային էջը, որը պարբերաբար կհամալրվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործունեության մասին և գործարարների համար օգտակար այլ տեղեկատվությամբ:

Ձեռնարկատիրական գործունեությանն առնչվող օրենսդրության ու վարչարարության պարզաբանման նպատակով 2013 թվականին կշարունակի գործել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի «թեժ գիծը», որի միջոցով հայ գործարարները հնարավորություն կունենան ներկայացնելու իրենց դիմում-բողոքները, հարցադրումները և առաջարկությունները:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը ակտիվ ներգրավված կլինի գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներում, մասնավորապես, կաջակցի նախատեսվող օրենսդրական նախաձեռնությունների ազդեցության գնահատման և վերլուծությունների աշխատանքներին:

Գործարար ուսուցողական աջակցության ծրագրի իրականացման նպատակով նախատեսվում է կիրառել նոր մոտեցումներ ՓՄՁ-ի սուբյեկտներին տրամադրվող ուսուցողական աջակցության արդյունավետության բարձրացման և այն առավել նպատակային ու շարունակական դարձնելու ուղղությամբ:

Ծրագրային այս ուղղության բաղադրիչներից է հանդիսանում նաև սկսնակ գործարարների ուսուցումը, որը նկարագրված է 5-րդ գլխի 2-րդ կետում:

Կարևորելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ կատարվող տնտեսական դաշտին առնչվող փոփոխությունների վերաբերյալ ՓՄՁ-ի սուբյեկտների հրատապ տեղեկացվածության, ինչպես նաև ՓՄՁ-ի սուբյեկտներին այդ փոփոխությունների ներկայացման և պարզաբանման անհրաժեշտությունը, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների միջոցով «բաց դռների» սկզբունքով կկազմակերպվեն ուսուցողական (տեղեկատվական) բնույթի միջոցառումներ:

Արդյունաբերական համակարգերի կառուցմանն աջակցություն ծրագրային ուղղության շրջանակներում նախատեսվող գործարար մոդելների ստեղծման և արդյունավետ իրագործման ապահովման նպատակով, անհրաժեշտության դեպքում, ՓՄՁ-ի սուբյեկտներին նեղ մասնագիտական ուղղություններով (կահույքագործ, պանրագործ, մեղվաբույծ, հացթուխ, հրուշակագործ և այլն) արհեստավարժ կադրերով ապահովելու համար կկազմակերպվեն նեղ մասնագիտական ունակությունների և աշխատանքային հմտությունների ձեռքբերմանն ու կատարելագործմանն ուղղված դասընթացներ՝ համագործակցելով Հայաստանում այդ ուղղությամբ գործող կազմակերպությունների և հաստատությունների հետ (մասնավորապես՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության հետ), ինչպես նաև ներգրավելով միջազգային մասնագետներին ու փորձագետներին:

Ուսուցողական ծառայություններ մատուցող կազմակերպությունների ներկայացուցիչների մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացման և նրանց կողմից մատուցվող ծառայությունների որակի բարելավման, ինչպես նաև Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և ՓՄՁ-ի

սուբյեկտների ներկայացուցիչների մասնագիտական գիտելիքների և ունակությունների մակարդակի բարձրացման նպատակով 2013 թվականի ընթացքում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից աշխատանքներ կիրականացվեն միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների (ծրագրերի) հետ՝ վերջիններիս համար վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու ուղղությամբ:

Ընդհանուր առմամբ, 2013 թվականին գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական աջակցության ծրագրերի շրջանակներում նախատեսվում է՝

ա) գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ցուցաբերում 3500-4500 ՓՄՁ-ի սուբյեկտի,

բ) գործարար ուսուցողական (տեղեկատվական) աջակցության ցուցաբերում 700-800 ՓՄՁ-ի սուբյեկտի.

2) **Հաշվապահական կենտրոնի գործունեության ապահովում**

2013 թվականին անհրաժեշտ միջոցներ կձեռնարկվեն Հաշվապահական կենտրոնի գործունեության կազմակերպման ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա ՓՄՁ-ի սուբյեկտներին օգտվել հաշվապահական հաշվառման վարման և հարկային հաշվետվությունների պատրաստման մատչելի ծառայություններից: Կմշակվի Հաշվապահական կենտրոնի գործունեության նոր ռազմավարություն, ինչը կնպաստի Հաշվապահական կենտրոնի գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Աշխատանքներ կիրականացվի Հաշվապահական կենտրոնի գործունեության աշխարհագրության ընդլայնման ուղղությամբ: Այդ նպատակով պայմաններ կստեղծվեն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի մարզային մասնաճյուղերում, որտեղ Հայաստանի Հանրապետության մարզերի ՓՄՁ-ի սուբյեկտները հնարավորություն կունենան ստանալ Հաշվապահական կենտրոնի կողմից տրամադրվող ծառայություններին համանման ծառայություններ:

Դրա հետ մեկտեղ Հաշվապահական կենտրոնի կողմից կկազմակերպվեն խորհրդատվական և ուսուցողական բնույթի սեմինարներ ՓՄՁ-ի սուբյեկտների աշխատողների մասնակցությամբ:

Ընդհանուր առմամբ, 2013 թվականին Հաշվապահական կենտրոնի կողմից մատուցվող ծառայություններից կօգտվեն ավելի քան 2000 ՓՄՁ-ի սուբյեկտներ:

7. ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն

ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեության զարգացման համար կարևոր խնդիր է հանդիսանում նաև ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը: Այդ նպատակով ծրագրի շրջա-

նակներում 2013 թվականի ընթացքում կշարունակվի ֆինանսական աջակցության գործիքների կիրառումը:

Ծրագրային այս ուղղությունը ներառում է հետևյալ ֆինանսական գործիքները՝

- Սկսնակների գործարար ծրագրերի ֆինանսական աջակցություն, ինչը նկարագրված է ծրագրի 5-րդ գլխի 2-րդ կետում,
- ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրում,
- ՓՄՁ-ի սուբյեկտների ուղղակի վարկավորում և սեփական կապիտալի ֆինանսավորում:

Անհրաժեշտության դեպքում, կդիտարկվեն (կքննարկվեն ու կմշակվեն) նաև այլ ֆինանսական գործիքներ, որոնց ընդունման և փորձնական գործարկման պայմաններում դրական արդյունքների ապահովումը հիմք կհանդիսանա դրանց հետագա ներդրման համար:

1) ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրում

ՓՄՁ-ի սուբյեկտների ֆինանսավորման (վարկավորման) հետ կապված հիմնախնդիրների հաղթահարման և այդ ուղղությամբ նրանց համար ֆինանսական (վարկային) ռեսուրսների մատչելիության ապահովման նպատակով ծրագրի շրջանակներում, որպես ֆինանսական աջակցության գործիք, 2013 թվականին կշարունակվի ՓՄՁ-ի սուբյեկտներին (այդ թվում՝ կին գործարարներին) վարկային երաշխավորությունների տրամադրումը, որը կիրականացվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից: Այն նպատակաուղղված է ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման միջոցով գրավադրման խնդրի հաղթահարմանը, Հայաստանի Հանրապետության մարզերում, հատկապես սահմանամերձ և հեռավոր բնակավայրերում, ՓՄՁ-ի սուբյեկտների վարկավորման հնարավորությունների ընդլայնմանը: Հաշվի առնելով ֆինանսատնտեսական ճգնաժամի ներկայիս ազդեցությունը՝ առանձին դեպքերում վարկային երաշխավորությունների տրամադրումը նպատակաուղղված կլինի գրավի խնդիր չունեցող, սակայն ցածր իրացվելիություն ունեցող ՓՄՁ-ի սուբյեկտների վարկավորման խնդիրների լուծմանը:

ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման գործիքն ունի մարզային ուղղվածություն, սակայն 2013 թվականից սկսած սույն ծրագրի շրջանակներում աջակցություն կտրամադրվի նաև Երևան քաղաքում գործող ՓՄՁ-ի սուբյեկտներին:

Այստեղ նախապատվությունը կտրվի գրավի անբավարարության կամ ցածր իրացվելիության պատճառով չվարկավորված արտադրության կամ ծառայությունների ոլորտում գործող, ինչպես նաև տնտեսական ցածր ակտիվությամբ առանձնացող բնակավայրերում և շրջաններում առևտրի ոլորտում գործող շահառուներին կամ ներմուծումը փոխարինող, արտահանող, արտա-

հանման ներուժ ունեցող, նորարարություններ ներդնող և նոր տեխնոլոգիաներ կիրառող ՓՄՁ-ի սուբյեկտներին:

2013 թվականին նախատեսվում է ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի իրականացման ֆինանսական ռեսուրսների ծավալի ավելացում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի միավորված դրամագլխի միջոցների, ինչպես նաև Ասիական զարգացման բանկից ֆինանսական միջոցների ներգրավման հաշվին, որը կուղղվի Հայաստանում կին գործարարներին, այդ թվում՝ սկսնակ կին գործարարներին, վարկային երաշխավորությունների տրամադրմանը:

Վարկային երաշխավորությունների տրամադրման առավելագույն ժամկետը կազմում է 5 տարի: ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շրջանակներում ՓՄՁ-ի սուբյեկտներին տրամադրվող վարկային երաշխավորության գումարը չի կարող գերազանցել վարկային պարտավորության (վարկի մայր գումար և տոկոսներ) 70 տոկոսը և 15,000.0 հազ. դրամը: Սույն ծրագրի շրջանակներում վարկային երաշխավորությունները տրամադրվում են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործընկեր բանկերի (Զարգացման հայկական բանկ, Արդշինինվեստբանկ, Անելիք բանկ, Ինեկոբանկ, Հայբիզնեսբանկ և Արմսվիսբանկ) միջոցով:

Առանձին դեպքերում Հայաստանի Հանրապետությունում գործող ՓՄՁ-ի սուբյեկտներին կարող են տրամադրվել 15,000.0 հազ. դրամը գերազանցող վարկային երաշխավորություններ՝ 5 տարուց ավելի ժամկետով, որոնց տրամադրման մեխանիզմները յուրաքանչյուր դեպքի համար կսահմանվեն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

Ընդհանուր առմամբ, 2013 թվականին 170-200 գործող ՓՄՁ-ի սուբյեկտների և սկսնակ գործարարների կտրամադրվեն վարկային երաշխավորություններ:

2) ՓՄՁ-ի սուբյեկտների ուղղակի վարկավորում և սեփական կապիտալի ֆինանսավորում

2013 թվականին ՓՄՁ-ի սուբյեկտների ուղղակի վարկավորման և կապիտալի ֆինանսավորման ծրագրեր կիրականացվեն «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի գործունեության շրջանակներում:

«ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն նախատեսում է 2013 թվականի ընթացքում ակտիվորեն շարունակել ՓՄՁ-ի սուբյեկտների ֆինանսավորման գործընթացը՝ տարեվերջին ֆինանսավորման ծավալը հասցնելով շուրջ 6,000,000.0 հազ. դրամի:

Միաժամանակ, բացի ուղղակի վարկավորումից և կապիտալի ֆինանսավորումից 2013 թվականին «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն կշարունակի ՓՄՁ-ի սուբյեկտներին մատուցել ծառայության նոր տեսակ՝ «առևտրային երաշխիքների

տրամադրում»: Մասնավորապես, կտրամադրվեն մրցույթների մասնակցության, կանխավճարների ապահովման, պայմանագրերի կատարման, հետավարտման (որակի) և արտահանման երաշխիքներ, որոնք կնպաստեն ինչպես տեղական շուկայում գործունեություն իրականացնող, այնպես էլ արտահանման ներուժ ունեցող ընկերությունների գործունեության զարգացմանը:

Ֆինանսական այս գործիքի ներքո կարևոր նշանակություն կտրվի ՓՄՁ-ի սուբյեկտների սեփական կապիտալում մասնակցություն ձեռք բերելուն: Մասնավորապես, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից կբացահայտվեն ՓՄՁ-ի սուբյեկտներ (հիմնականում Հայաստանի Հանրապետության մարզերում), որոնք հետաքրքրված կլինեն այս գործիքի կիրառմամբ և որոնց զարգացումը հնարավոր կլինի ապահովել այս գործիքի ներդրմամբ: Այդ ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցություն կտրամադրվի գործարար առաջարկների ձևավորման հարցում: Հետագայում գործարար առաջարկները կներկայացվեն «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ին՝ այդ գործարար առաջարկների կենսունակությունը գնահատելու և դրական գնահատված գործարար առաջարկներ ներկայացված ՓՄՁ-ի սուբյեկտների սեփական կապիտալում մասնակցություն ձեռք բերելու նպատակով:

Ընդհանուր առմամբ, 2013 թվականին ՓՄՁ-ի սուբյեկտներին կտրամադրվի ավելի քան 2,000,000.0 հազ. դրամի վարկային միջոցներ:

8. Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ-ի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում

2013 թվականին աշխատանքներ կիրականացվեն Հայաստանում ՓՄՁ-ի զարգացմանն ուղղված համապատասխան ծրագրեր (միջոցառումներ) իրականացնող միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնման, մասնավորապես, ծրագրի շրջանակներում որպես ծրագրային ուղղություն (ծրագրային միջոցառում) «Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ-ի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում» ծրագրային միջոցառման իրականացման ուղղությամբ:

Ծրագրով նախատեսված ծրագրային ուղղությունների ընդլայնման նպատակով ինչպես ընթացքի մեջ գտնվող ծրագրերի շրջանակներում, այնպես էլ նոր ծրագրերի մշակման ու իրականացման ուղղությամբ 2013 թվականին կիրականացվի համագործակցություն ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության «Ձեռնարկությունների զարգացում և շուկայի մրցունակություն» ծրագրի, Հեյֆեր կազմակերպության հայաստանյան գրասենյակի, Ձեռնարկությունների եվրոպական ցանցի, Գերմանիայի միջազգային համագոր-

ծակցության կազմակերպության, Միջազգային գործարարության և համագործակցության հոլանդական գործակալության և վերջինիս կողմից իրականացվող «Համագործակցության զարգացում» ծրագրի, Զարգացող երկրներից ներմուծման խթանման կենտրոնի, Լեհաստանի ձեռնարկությունների զարգացման գործակալության, Բուլղարիայի ՓՄՁ-ի զարգացման գործակալության, Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության, ինչպես նաև այլ միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների (ծրագրերի) հետ:

Ասիական զարգացման բանկի հետ համագործակցության շրջանակներում վերջինիս ֆինանսական աջակցությամբ կիրականացվի «Կանանց ձեռներեցությանն աջակցության ծրագիրը», որի նպատակն է բարելավել կանանց ձեռնարկատիրական կարողությունները և մեծացնել ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը կին գործարարներին:

Աշխատանքներ կիրականացվեն նաև եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո իրականացվող Սևծովյան ավազանի երկրների 2007-2013 թվականների համատեղ գործողությունների ծրագրի շրջանակներում: Մասնավորապես, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը անցնելով սույն ծրագրի շրջանակներում ընտրության վերջնական փուլ՝ կմասնակցի այդ ծրագրին նոր ծրագրային առաջարկով՝ «Տեղական/տարածաշրջանային տնտեսական զարգացման ցանցը որպես որոշիչ գործոն Սևծովյան տարածաշրջանում մրցակցության խթանման համար»: Նշված ծրագրի ընդհանուր համակարգումը կիրականացնի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը. Մասնակից երկրներն են՝ Հունաստանը, Վրաստանը, Բուլղարիան և Մոլդովան:

2013 թվականին կընդլայնվի համագործակցությունը ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի և ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության հետ:

ԳԼՈՒԽ 6. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Համաձայն «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի պահանջների՝ փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին աջակցության տարեկան ծրագրերի ֆինանսավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից՝ առանձին տողով: Սակայն այն կարող է իրականացվել նաև օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:

Ծրագրի իրականացման համար Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեից նախատեսվում է հատկացնել 150,000.0 հազ. դրամ, որի հաշվին կապահովվի ծրագիրն իրականացնող անձնակազմի և փորձագետների՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի աշխատողների վարձատրությունը:

Ծրագրի իրականացման արդյունավետությունը և ֆինանսական գործիքների ճկունությունն ապահովելու նպատակով 2013 թվականին կմիավորվի սկսնակ գործարարների ֆինանսական աջակցության դրամագլուխը և վարկային երաշխավորությունների դրամագլուխը որպես մեկ միավորված դրամագլուխ (այսուհետ՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի միավորված դրամագլուխ):

Ծրագրով նախատեսված ծրագրային ուղղությունների (միջոցառումների) ֆինանսական ապահովումը կիրականացվի հետևյալ միջոցների հաշվին՝

1. **«ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում, կառավարում և ընդլայնում» ծրագրային ուղղությունը** նախատեսվում է իրականացնել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի եկամուտների հաշվին (մասնավորապես՝ կապահովվի վերջինիս պահպանման ծախսերը), ինչպես նաև ՄԱԿ-ի զարգացման ծրագրի միջոցների հաշվին՝ վերջինիս հետ համագործակցության շրջանակներում.

2. **Սկսնակների գործարար ծրագրերին ֆինանսական աջակցության տրամադրումը և ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրումը** կիրականացվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի միավորված դրամագլխի (778,000.0 հազ. դրամ, այդ թվում՝ սկսնակ գործարարների ֆինանսական աջակցության դրամագլխի) միջոցների հաշվին, ինչպես նաև Ասիական զարգացման բանկի հետ համագործակցության շրջանակներում նախատեսվող ֆինանսական միջոցների ներգրավման հաշվին, որը կուղղվի Հայաստանում կին գործարարներին (այդ թվում՝ սկսնակ) վարկային երաշխավորությունների տրամադրմանը.

3. **ՓՄՁ-ի սուբյեկտների ուղղակի վարկավորումը և սեփական կապիտալի ֆինանսավորումը** նախատեսվում է իրականացնել «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրված միջոցների (6,400,000.0 հազ. դրամ) հաշվին.

4. **«Հաշվապահական կենտրոնի գործունեության ապահովում»** ծրագրային ուղղությունը կիրականացվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի եկամուտների հաշվին, ինչպես նաև նախատեսվում է շարունակել Երևանի Կոմիտասի պողոտայի 49/3 հասցեում տեղակայված տարածքի օգտագործումը.

5. **«Արդյունաբերական համակարգերի կառուցմանն աջակցություն» ծրագրային ուղղության իրականացումը նախատեսվում է՝**

- գործարար մոդելների ստեղծումը՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի եկամուտների հաշվին,
- գործարար մոդելների իրագործումը՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի միավորված դրամագլխի միջոցների հաշվին, եթե այդ գործարար մոդելների իրագործման համար անհրաժեշտ

կլինի վարկային երաշխավորության տրամադրում կամ սկսնակ գործարար ծրագրի իրականացման ֆինանսական աջակցություն.

6. Մնացած ծրագրային ուղղությունները (միջոցառումները) նախատեսվում է իրականացնել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի եկամուտների, ինչպես նաև «ՓՄՁ ներդրումներ» ոչ-վերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի գործունեության արդյունքում ստացված եկամուտներից Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ին տրամադրված շահաբաժնի հաշվին:

Ծրագրային ուղղությունների (միջոցառումների) իրականացման նպատակով կարող են ներգրավվել նաև միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների միջոցները, այդ թվում՝ համաֆինանսավորման տարբերակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2013 թվականի
հունվարի 24-ի N 55 - Ն որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՆ» 2013 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառումը	Կատարողը	Կատարման ժամկետը
1.	ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում, կառավարում և ընդլայնում ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում, կառավարում և ընդլայնում իրականացնող Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի աշխատողների մասնագիտական հմտությունների զարգացման և որակավորման բարձրացման ուղղությամբ աշխատանքներ, ինչպես նաև աջակցության ցուցաբերում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կենտրոնական գրասենյակի, մարզային մասնաճյուղերի պահպանմանը, ամրապնդմանը, դրանց գործունեության ընդլայնմանն ու վերջիններիս կարողությունների հզորացմանը	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ (համաձայնությամբ)	2013 թ. ընթացքում
2.	Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ (համաձայնությամբ)	2013 թ. ընթացքում

3.	Տեղական և տարածքային տնտեսական զարգացում	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ (համաձայնությամբ)	2013 թ. ընթացքում
4.	Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում՝ 1) ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) արտահանման և շուկաներում առաջմղմանն աջակցություն. 2) Հայաստանում Ձեռնարկությունների եվրոպական ցանցի հաղորդակցման կենտրոնի գործունեության ապահովում	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ (համաձայնությամբ)	2013 թ. ընթացքում
5.	Արդյունաբերական համակարգերի կառուցմանն աջակցություն	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ (համաձայնությամբ)	2013 թ. ընթացքում
6.	ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական աջակցություն և Հաշվապահական կենտրոնի գործունեության ապահովում՝ 1) ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական աջակցություն. 2) Հաշվապահական կենտրոնի գործունեության ապահովում	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ (համաձայնությամբ)	2013 թ. ընթացքում
7.	ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն՝ 1) ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրում. 2) ՓՄՁ-ի սուբյեկտների ուղղակի վարկավորում և սեփական կապիտալի ֆինանսավորում	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ (համաձայնությամբ) «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ (համաձայնությամբ)	2013 թ. ընթացքում

8.	Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ-ի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ շահագրգիռ կառույցներ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ (համաձայնությամբ)	2013 թ. ընթացքում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ